




ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՎԱՐՄԹ 23 ՓԵՏՐՎ. 1907. ԱԼԵԲՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՆԴԻՐԸ



Կ. Պոլսոյ Բիզանդին օրաթերթի փետր. 1-14
թիւին մէջ հետևեալ շահեկան լուրը կը կարդանք:

«Տարւոյն այս եղանակն Աղեքսանդրիոյ ե-
կեղեցական և վարչական վէճերու շրջանն է. Ե-
րէկուան Խառն Ժողովոյ մէջ այս մասին գրուած
նամակներ կային, որոցմով բաւական զբաղեցաւ
Ժողովը: Աղեքսանդրիոյ մէջ խումբ մը անձեր
չեն ուզեր Բարթող փաշայի ատենապետութեան
ներքեւ գտնուած Թաղ. Խորհուրդը: Բարթող փա-
շա ալ ասոնք չուզեր բնաւ և կը հրաժարի պաշ-
տօնէն: Իսկ Խառն Ժողո որքն այս չուզողներու
գիտումը կըռած է, կը փափաքի որ Բարթող
փաշա շարունակէ իր պաշտօնը: Ասկէ առաջ
խնդրոյն քննութիւնը յանձնուած էր Պողոս փա-
շայի, որ իր պաշտօնը չկատարած Եւրոպա ու-
ղեւորեցաւ, ու այս անգամ Եգիպտոս վերադառ-
նալուն՝ չուզեր ստանձնել այդ պաշտօնը, որով-

հետև ինքն ալ համամիտ է Պողոսյ Խառն ժողովին և Բարթող փաշայի Խաղ. Խորհրդոյ ատենապետ մնալուն կողմն է, բայց ընդգլխութեան չհանդիպելու համար կ'ուզէ չէզոք մնալ: Այսու հանգերձ գործը վերջնական լուծման մը կարօտ ըլլալով, Խառն ժողովն սրտեց երէկ անպատճառ այս մասին լսել Պողոս փաշայի կարծիքն և այդ մասին վրայ պէտք եղած սրտշումը տալ:

Բիւզանդիոնի հաղորդած այս տեղեկութիւնները, թէև քիչ մը ճապաղ, սակայն կը հաստատեն սա իրողութիւնը թէ Ալեքսանդրիոյ ազգային ինդրի կարգադրման մասին համաձայնութիւն մը տիրէ Վսեմ. Պողոս փաշայի և Վսեմ. Բարթող փաշայի միջև, ինչ որ բարեգուշակ բան մըն է:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Օհանեան ընտանիքը հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ բոլոր այն հեռաւոր և մերձաւոր ազնիւ բարեկամաց որոնք գրաւոր կամ բերանացի կերպով իրենց ցաւակցութիւնը յայտնած են վաղամեռիկ Անահիտ Օհանեանի մահուան առթիւ:

ՆՈՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ

Պարիսրքարանէն վսեմ, Արրահամ փաշա Բարթողի
ուզղում զիմում մը, նկարագրելէ յետոյ Փոքր Ասիոյ
հայաբնակ գաւառներու մէջ այս տարի տիրած գառ-
նաչունջ ձմեռը ու խորշակի, կարկուտի և մա-
րախի նման բնական պատուհասները, կը խնդրէ նորին
վսեմութենէն որ հաճի իր նախագահութեան տակ
հանգանակութիւն մը բանալ այսուցի կարող ազգա-
յիններէ պատշաճ եղանակաւ նպաստ հասցնելու հա-
մար կարօտեալներուն: Պարիսրքական սոյն զիմու-
մին ոյժ տուած են նաև բերանայի կերպով, տեղոյս
գաւառացի ազգայիններէն ումանք և նորին վսեմութիւնը
ինչպէս միշտ, այս անգամ ալ իր ձեռնտուութիւնը չէ
զլայցած:

Հանգանակելի գումարը պիտի զրկուի պատրիար-
քարանի նպաստից սնտուկին որուն անգամներն են
Տ. Գառնիկ Կիւլպէնկեան, Տ. Եղուարզ Գարակէօզեան,
Տ. Երուանդ Հսայեան, Տ. Սիմօն Գայսերեան և Տ. Տի-
րան Կիւմիւշկերտան:

Նպաստից սնտուկը այդ նպաստը պիտի յղէ կա-
րօտեալներուն Առաջնորդներու միջոցաւ:

Վստահ ենք որ Ալեքսանդրիոյ պատուարժան ազ-
գայինները այս անգամ ևս ցոյց պիտի տան Մայր - Հայ-
րենիքի ևս առուել բազմատանջ եղբայրներու մասին ի-
րենց հոգածութիւն և պիտի փութան մասնակցել հան-
գանակութեան մը որուն արդիւնքէն կախեալ է հա-
լարաւոր թշուառ հայրենակիցներու կեանքը:

ԵԶԵԱՆՑԻ ԿՏԱԿԸ

Կ. Պոլսոյ Բիւզանդիոն թերթին մէջ հետեւալը կը կարդանք.

«Ա. Էջմիածնէն գրուած է Պատրիարքարան որ ուստական կառավարութեան զեկուցման համեմատ, հանգուցեալ Պ. Կարապետ Եղիանց 200 ուստական ար ժեթուզթ կտակած է Սանասարեան վարժարանին, պայմանաւ որ եղբայրը ցմահ տոկոսն ստանայ: Այս արժեթուզթերու տեսակին և արժողութեան մասին ո և է ծանօթութիւն չէ տրուած, բայց ինչպէս կ'երևայ, բաւական կարևոր գումար մը պէտք է ներկայացընէ:»



ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ԳԱԶԻՐԷ

Պատահական թղթա ից մը Գահիրէէն կը գրէ մեզի: Գահիրէ ամեն ազգէ ստուար գաղութ կը ունենալուն պատճառով բարեկենդանի խրրախճանութիւնները քիչ մը կանուխէն կսկսին հոս: Գիմակաւորները սովորաբար կը համախմբուին « Է զ պ է ք ի յ է » ի հանրային պարտէզին մէջ: Ոչ մէկ գրիչ պիտի կրնար նըկարագրել այն խաղճութիւնները որոնք տեղի կունենան հոն այս առթիւ: Բայց ինչ որ ամենէն աւելի տխուր է այն է որ, մանաւանդ այս վերջին տարիներու մէջ, կարգ մը երիտասարդներ և օրիորդներ, ոչ թէ զիմակով այլ ազամային երեսով, կը պառուսքին պարտէզին մէջ ու մասխարկութիւններ կընեն: Այսպէս է որ անցած կիրակի դժբախտաբար պատէհութիւնը ունեցայ նոյն պարտեզին մէջ հանդիպելու քանի մը հայ օրիորդներու (զիւրաւ կըմբռնէք այն պատ-

ճառները որոնք զիս կը պարտաւորէն լուսթեամբ անց-
նելու անուններուն վրայէն, բայց հաստատապէս որո-
շած եմ այդ անունները հանրութեան հաղորդել եթէ
ետ չքաշուին) պտոյտներ կընէին տեսակ տեսակ ան-
պարկեշտ ակնարկութիւններ ընելով երիտասարդ ան-
ցորդներուն, և տեղի տուին որ թեթևաոլիկ պարոննե-
րու փոքրիկ ջոկատը զիրենք քիչ մը աւելի մօտէն
չըջապատէ, ո՛հ ի՛նչ շնորհալի են այս օրիօրդները. . .
և մանաւանդ որքան պջրուն . . . Արդ կը հարցնեմ
ո՞վ է իր ցեղին պատուոյն նախանձախնդիր հայր որ
պիտի հանդուրժէր այս ըմբոստացուցիչ տեսարանին:

Ուստի ինձի կը թոյլատրեմ ուշադրութիւնը հրա-
ւիրել ծնողքներուն, որպէսզի զգոյշանան իրենց աղ-
ջիկ զաւակները մինակ դուրս հանելէ ոչ միայն այս-
պիսի հանգէսներու օրեր այլ նոյնիսկ պարզ օրեր:

Գ. Տ.

ՍՄԷՆ ԲԱՆ ՊԱՏՄԱՍԵ Է ՅԻՄԱՐԱՆՈՅ ԵԿԷՔ

Ի՛նչ պիտի խորհէիք այն մարդուն վրայ որ ճամ-
բան գացած ատեննիդ ձեզի կեցունէր և սա տեսակ
հարցում մը ուզդէր.

- Դուք ապակեղէն ծովուն վրայ կենալ կ'ուզէ՞ք:

Եւ եթէ այս տարօրինակ հարցումէն չուարած՝ ու-
զէիք իմանալ իր նպատակը, ամենայն պաղարիւնու-
թեամբ պատասխանէր ձեզի:

- Իմ նպատակս է փրկութեան ծրագրին չորրորդ
թշնամին մատնանիչ ընել և իմաստուն կոյսերուն առ-
նելիք իւրը իսկապէս ծանօթացնել քեզի:

Ապահովաբար այդ հարցումն ընող ու այդ պատաս-

խանը տուող մարդը խենթ մը պիտի նկատէիք ու պիտի փութայիք կարելի եղածին չափ շուտ քովն փախչիլ, վախնալով որ վզերնիդ կը փաթթուի:

Արդ, այս օրերս ձեռքս անցաւ Ալեքսանդրիոյ մէջ նոր տպուած կապոյտ կողքով գիրք մը որ այդ հարցումն ու պատասխանը պարունակելէ զատ, տակաւին ասիէ շատ աւելի խենթութեամբ բաներ կը պարունակէր:

Նախ՝ կողքին վրայ " և է խորագիր չի կայ, այս պատկեր մը: Այս պատկերը կը ներկայացնէ ձերմակներ հագած աղջիկ մը, կոնակին վրայ հնդկահաւի երկու փետուր փակցուցած, ձախ ձեռքով տետրակ (1) մը բռնած, իսկ աջ ձեռքը տաճկական մզկիթներու ճէմիշներուն մէջ գործածուած երպրըխ մը: Այդ երպրըխով ձերմակներ հագած աղջիկը կասկածելի բան մը կը լեցընէ սգաւոր և կարճահասակ աղջկան մը թիւն մէջ զտնուած արարական կիւլէի մը մէջ: ձերմակ աղջկան անունն է Յայտ. ժը. 1-5, իսկ սգաւորը կը կոչուի՝ Մատթ. իե. 4: Այսչափը կարծենք բաւական է Ապպասիէի յիմարանոցը ազատ մուտք ունենալու համար, բայց անցնինք ու դարձնենք կողքը:

Կողքը դարձնելուս պէս առաջին անգամ աչքիս կը զարնէ Անպղիացիի մը անունը՝ Ֆրէտէրիք Սիճէսարն:

- Ի՞նչ գործ ունի այդ յուրջ մարդը (քանի որ Անպղիացի է, եթէ ո՛չ Ամերիկացի) այստեղ պիտի հարցընէք:

Հարկ է ըսել որ գրքին բուն իսկ հեղինակն է:

(1) Գոչէ Ազատ Խօսքի չվճարող բաժանորդներ անուանց ցանկը:

Ինչ մը վար սա կողջ կը կարգանք «Ամեն բան պատրաստ է հարսնիք եկէ՛ք», ու յետոյ գրքին խորագիրը՝ ԳԱՌՆՈՒԿԻՆ ՀԱՐՍԱՆՆԱՑ ՀՐԱԻԷՐԸ: Խորագրէն յետոյ նոր ուղերձ մը կ'ուղղուի ընթերցողներուն «Աստի գացէ՛ք ճամբու գլուխները և ո՛վ որ գտնելու ըլլաք հարսնիքի հրաւիրեցէ՛ք:» Վերջապէս կ'երևալ թարգմանիչը, ազատ ոճով, ընդլայնումներով ու կարեւոր յաւելումներով նոյն ինքն Կ. Գ. Ուզունեան:

«Ազնիւ ընթերցող, կըսէ թարգմանիչը յաջորդ երևին մէջ, այս գրքոյկը հրատարակելով նպատակ ունինք երրորդ հրեշտակի պատգամին հետ Աստուծոյ ժողովուրդին մէջ ներմուծուած խեղաթիւրումներն ու մոլորութիւնները երևան հանել, փրկութեան ծրագրին չորրորդ թշնամին մատնանիչ ընել, և իմաստուն կոյսերուն ատենելիք իւրը իսկապէս ծանօթացընել քեզի:»

Ու այդ կարգի ուրիշ բանգուշանքներ ընելէ յետոյ մեզ ճամբու կը գնէ ըսելով «Տէրը հետերնիդ ըլլայ:»
(Շար.)

ՓԱՍՏԱԲԱՆ

Մ . Թ . Է . Ո . Բ . Ի . Լ . Ե . Ա . Ն

Կը ստանձնէ ամէն տեսակ գատեր թառն Իատարաններու առջև, նմանապէս կը խմբագրէ ամէն պայմանագրութիւններ եւ այլ գատական պաշտօնագրեր:

Գրասենեակը կը գտնուի Մէնչիէի հրապարակին վրայ, Մօնֆէրաթօյի շէնքին մէջ:



“ԱՐՍ ԽՈՒՐ”-ի Գրքաները

• ԱՐՍ ԽՈՒՐ • ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԵՄԲՈՒ ՕՐԵՐԸ
Եզիպտոսի համար բաժնեկիցներ

40 ՔԻՆԸ	40 ԴՐԵ ԱՂՋ
20 ”	20 ” ”

Ա Ր Յ Ա Ս Ա Ղ Ա Ն

ԵՐՐԱՎ	40 ՔԻՆ	10 ՏՐԱՐ
ՈՐՈՒՄ	”	4 ՈՐՈՒՄԻ
ԱՍԵՐԻՎԱ	”	2 ՏՐԱՐ

Բաժանորդագրուիլիս կանխիկ

ՀԱՏԸ 1 ԴՐԵ ԱՂՋ

“ԱՐՍ ԽՈՒՐ”-ի համար բաժնեկիցներ կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել Տե-
տեանց հասցէին՝

Ք. Nazarethian
Rue Stamboul

ALEXANDRIE, EGYPT

Մանուգրութեան կրկնութեան համար
պայմաններով:

Գրատպութեան առաջին թիւը **Ե. ՕՏԻԱՆ**

Տպար. Գրքեր Կ. ՆԱԶԱՐԵԹԻԱՆ ԱԼԵՔԱՆԴՐԻԱ